<u>Հայտարարություն</u>

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

**1. Հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 43-34.2-Մ2-6)**

1.իրականացնում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզավորման հետ կապված աշխատանքները.

2.իրականացնում է ռադիոհաճախականությունների օգտագործման, սիրողական ռադիոպերատոր-ների, ինչպես նաև համարների կամ կոդերի զբաղեցման թույլտվությունների տրամադրման հետ կապված աշխատանքները.

3.իրականացնում է առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործման դադարեցման հետ կապված աշխատանքները.

4.իրականացնում է Բաժնի գործառույթներից բխող իրավական ակտերի նախագծերի մշակումը, վարչական վարույթների իրականացման և ընդունված ակտերի կատարման ապահովումը, այլ փաստաթղթերի նախապատրաստումն ու աշխատանքները:

**2. Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝**

Տնտեսագիտություն կամ ռադիոտեխնիկա և կապ մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն.

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում չորս տարվա աշխատանքային ստաժ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Լիցենզավորման մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**3. Թափուր պաշտոնի հիմքի վերացման ժամկետը՝**
Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից նշանակում կատարվելը.

**4. Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝**
«12» «սեպտեմբերի» 2019թ.

**5. Աշխատավարձի չափը՝**
Երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը (212309 ) դրամի չափով.

**6. Աշխատանքի վայրը, հեռախոսահամարները՝**
ք.Երևան, Սարյան 22, հեռ. 52-53-40-108,118

**7. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝** դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն դիմում, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին,
մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
անձնագրի, հանրային ծառայության համարանիշի (սոցիալական քարտի) պատճենները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը $10^{00}$-ից մինչև $12^{30}$-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝
(Երևան, Սարյան22, հեռ. 52-53-40-108,118):